



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

17 մայիսի 2022 թվականի թիվ 69-Ա

ք. Երևան

#### «ՀԻՔԲԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 54-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՀԻՔԲԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերության 2022 թվականի մայիսի 13-ի տեսալսողական ծրագրի վերաբերյալ ծանուցումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է**.

1. Հաստատել «ՀԻՔԲԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերության տեսալսողական ծրագրի վերաբերյալ ծանուցումը՝ «Վիվառո Արենա» ծրագրի մասով, պայմանագրի գործողության ժամկետով:

Համաձայն 2021 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված համաձայնագրի՝ «ՀԻՔԲԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերությունը հանդիսանում է «ՎԻՎԱՌՈ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության «Վիվառո Սպորտ», «Վիվառո Սպորտ Պլյուս», «Վիվառո Արենա» տեսալսողական ծրագրերի իրավատերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀԻՔԲԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2022թ. մայիսի 17

ք. Երևան